


Մահացության դեպքերը նյարդահոգեբուժական բուժհաստատություններում 2010-2013 թթ.

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հատուկ ուշադրություն է դարձնում Հայաստանի Հանրապետությունում գործող փակ և կիսափակ հաստատություններում, այդ թվում նյարդահոգեբուժական բուժհաստատություններում, մահացության դեպքերին:


Տեղեկատվության հարցումների միջոցով առանձին բուժհաստատություններից ձեռք բերված տեղեկատվության համաձայն՝ 2010-2013 թթ. ընթացքում ՀՀ 8 նյարդահոգեբուժական բուժհաստատություններում՝ Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր, Լոռու մարզային հոգեյնարդաբանական դիսպանսեր, Գյումրու հոգեկան առողջության կենտրոն, Արմաշի առողջության կենտրոն, Սևանի հոգեբուժական հիվանդանոց և Հոգեբուժական բժշկական կենտրոնի՝ Նուբարաշենի, Ավանի, Նորքի հոգեբուժական, Քասախի ներգնդերի կլինիկաներ, մահացությունների թիվը կազմում է 145 /տե՛ս գծապատկեր 1/:

ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում մահացությունների թիվը 2010-2013 թթ. ըստ առանձին բուժհաստատությունների



Նյարդահոգեբուժական բուժհաստատություններում մահացությունների թիվը բավականին մեծ է, եթե հաշվի առնենք, որ նշված հոգեբուժական բուժհաստատություններում մահճակալների թիվը մոտ 1330 է: Այնուամենայնիվ, եթե համեմատականներ անցկացնենք նախորդ 4 տարիների՝ 2006-2009 թթ. հետ, ապա մահացության դեպքերի թիվը նվազել է 12-ով /2006-2009 թթ. գրանցվել է մահացության 157 դեպք/ /տե՛ս գծապատկեր 2/:

Գծապատկեր 2: 2006-2013 թթ. մահացությունների թիվը



2010-2013 թթ. մահացության 145 դեպքերից 141-ի պատճառներ են հանդիսացել սոմատիկ¹ հիվանդությունները, 4-ը ինքնասպանության հետևանք են եղել:

2010-2013 թթ. մահացության 145 դեպքերից միայն 43 դեպքով է քրեական գործեր հարուցվել իրավապահ մարմինների կողմից և կարճվել հանցագործության բացակայության պատճառով: Հարկ է նշել, որ ինքնասպանության բոլոր դեպքերով քրեական գործեր հարուցվել են: Ընդ որում ըստ տրամադրված տեղեկատվության՝ քրեական գործերի մեծամասնությունը /38/ հարուցվել են նույն հոգեբուժական բուժհաստատությունում, այսինքն տվյալ բուժհաստատությունում գործում է արձանագրված մահացության բոլոր դեպքերով քրեական գործեր հարուցելու պրակտիկան, ինչը, ինչպես տեսնում ենք, հատուկ չէ մյուս բուժհաստատություններին:

Այսպիսով, նյարդահոգեբուժական բուժհաստատություններում մեծ թիվ են կազմում մահացության դեպքերը, որոնց պատճառ որպես կանոն դառնում են սոմատիկ

¹ Սոմատիկ/մարմնական հիվանդություններ են համարվում՝

- սիրտ-անոթային հիվանդությունները,
- շնչառական ուղիների հիվանդությունները,
- կոտրվածքները, այրվածքները, վնասվածքները,
- ժառանգական, գենետիկական հիվանդությունները,
- երիկամների եւ լյարդի խանգարումները,
- նյարդային համակարգի օրգանական խանգարումները,
- ինֆեկցիաները եւ դրանցով պայմանավորված ներքին օրգանների խանգարումները,
- էնդոկրինային խախտումները,
- մակարոնիդական հիվանդությունները:

հիվանդությունները: Կարելի է եզրակացնել, որ պատշաճ ուշադրություն չի դարձվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոմատիկ հիվանդությունների բուժմանը, կանխարգելմանը: Ուստի անհրաժեշտ է համապատասխան միջոցառումներ իրականացնել՝ բարելավելու հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մոտ սոմատիկ հիվանդությունների կանխարգելմանը և բուժմանը:

Միաժամանակ հաշվի առնելով հոգեբուժական բուժհաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության ոչ բավարար վիճակը՝ վատ, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դրսևորումները, սննդի որակը, սոմատիկ հիվանդությունների բուժման վիճակը /տե՛ս [http://hcav.am/attachments/_dcdfc_MON_1\[1\].pdf/](http://hcav.am/attachments/_dcdfc_MON_1[1].pdf/) և մահացության դեպքերի վերաբերյալ հարուցված քրեական գործերի փոքր թիվը՝ կարող ենք հետևություն անել, որ պատշաճ ուշադրության չի արժանանում նաև մահացության դեպքերի քննությունը: Ուստի անհրաժեշտ է մահացության յուրաքանչյուր դեպքով իրականացնել անկախ, համակողմանի, անկողմնակալ քննություն՝ պատշաճ մակարդակով ապահովելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կյանքի իրավունքի պաշտպանությունը: